

**

Առաւօտ. առաջին նախարար անուանուեցաւ նախորդ առաջին նախարար Սայիտ փաշան, որ նշանաւոր է հակակրօթեամբը, զոր ունի մեր ազգին դէմ:

**

Կէսօր. ժամէ ժամ նոր փոփոխութիւններու կը սպասենք: Սայիտ փաշան դեռ պաշտօնանկ չեղաւ:

Երեկոյ. Սայիտ փաշան դեռ կը վարէ իւր պաշտօնը:

**

Կը գրուցուի, թէ անցեալ ամսու մէջ պ. Կօշէնի երեւցած Աստուածածինը *Ֆէրաճէ* հագած եւ երեսն ալ *եաշմահոյ* ծածկած է եղեր:

1 Սեպտեմբեր

Մասիսի խմբագիրը քանի մը ժամանակէ ի վեր ինքզինքը բոլորովին քահանայութեան տուած է. ամեն անգամ որ ձեռքս կ'առնեմ այս թերթը՝ մէջը ուրիշ բան չեմ գտներ, բայց միայն նշանտուք, կամ հարսանիք, կամ ննջեցեալ, եւ շատ անգամ ալ երեքը մէկէն:

Հարուստ մը նշանուելու պէս՝ Մասիս իւր բերանը կը բանայ եւ կը սկսի այսպէս խօսել.

«Բերկրօթեամբ սրտի իմացանք, որ վսեմափայլ այս ինչին ազգասէր, բարեսիրտ, գթասիրտ եւ ազնուական որդին – Մասիսի գոյականներն իսկ կը շողոքորթէ անոնց, իւրաքանչիւրին երբեմն չորս ածական տալով – Մեծապատիւ այս ինչին նազելաշուք աղջկանը նշանուած է եւ հարսանեանց հանդէսն ալ մօտերս պիտի կատարուի: Աւելորդ է ըսել, թէ այս միութիւնն ո՛րչափ բերկրութիւն պիտի պատճառէ ողջամիտ ազգայիններու. վասն զի այս միութենէն պիտի ծնանին այնպիսի զաւակներ, որ – Մասիսի բաժանորդ պիտի գրուին – մեծամեծ ծառայութիւններ պիտի մատուցանեն ազգին. այնպիսի զաւակներ՝ որոնց փայլուն ապագայն այսօր իսկ կարող ենք շնորհաւորել»:

Իսկ երբ հարուստ մը վախճանի՝ Մասիսի խմբագիր Տէր Իւթիւճեան քահանայն ննջեցեալին տղուն հարցնել կու տայ ուրիշի մը բերնով, թէ պիտի շարունակէ՞ Մասիսի բաժանորդագրութիւնն. եթէ բացասական